



ՀՅԱՆԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ Ա.

ԳԱՐՄԻՔՆԵՐ.

Այս լոգուածով ես մտադիր եմ, կարելի եղածին չափ ուսումնասիրել հայկական երաժշտութիւնը, խօսելով թէ եկեղեցական և թէ ազգային եղանակների մասին։

Որպէս երաժշտական եղանակները, նոյնպէս և նրանց գործիքները, ինչպէս պիտի տեսնենք, գորեզապէս կրում են արևելեան հին և նոր ազգերի ազգեցութեան զրոշմը, սակայն դարերի ընթացքում նրանք ստացել են հայկականութիւն, կերտուելով գործածող ազգի բնաւորութեան համաձայն, ազգուելով ոչ միայն հայ ազգի զանազան կյամարի, զանազան միջավայրի մէջ գոլացած տեսմուրամննախց, ալլ և այս և այն նոր ազգերի հետ ունեցած շփումներից։

Ամէնից առաջ, սակայն, հարկաւոր է մի ամփոփ գաղափար տալ նուազարանների մասին։

Եթէ ընդունենք որ հայ ժողովրդի արժմեան նուազարաններից մի քանիսը կատարելազործուած կամ անփոփիս մնացորդներ են ազգային հին գործիքների, այն ժամանակ ազգային գործիքներ

պիտի համարել ու անթռութը, քէմէնչան (ճիշճնուրը), ու ազը, փողը, ծնծղան և թմբուկը։ Հայկական պատմական արդ գործիքներին մասին տեղեկութիւններ առակա են։ Լարական նուազարաններից պատմագիրները իշխատակում են քնարը, ջնարը, վինարը, տաւիզը, փանդին ու ներամբի ունեցուշտ արև նուազարանների կազմութեան նկարագրութիւննեց կարելի էր որոշել թէ արժմեան որ գործիքներին են նման թաց ալնքան թեթե, անորոշ նկարագրութիւններ կան նրանց մասին, որ հաստատապէս մատնանիշ անեն արժմեան նուազարանների վրայ և առել որ այս գործիքը պատմական այն ինչ գործիքն է-անհնար է, Փանդինը, որինակ, որ վորու-Ասիական գործիք է *)։ և անունն էլ լունարեն (pandura), նշանակում է երեքազիան կիթառ, նման է քէմէնչէին (ճիշճնուրին) որ իսկապէս երեքազիակար կիթառ։ է Բամբիուը, որ Գողթան երգիւների գործիքն էր, ըստ Յովհաննէ կաթուղիկոսի **) սկսողնոտցահար աղէքախո նուազարան էր, նմանում է մեծ հաւանականութեամբ արժմեան ու ազին թաց ու ազը միւս կողմից, ըստ նկարագրութիւնների, պէտք է որ վինը լինի, մի ամենահին գործիք, որի կատարելազործուածը թառն է և որը նշգկական ծագում ունի։ Խոկական հարկական նուազարան, վշշողականներից կարելի է համարել սփող և զեարը, որից Հալաւատանում մշշա կարելի է հանդիպել և որի անունը հայերի մէջ մինչեւ ալժմ մնացել է սփող։

Թողնելով հսկասաններին պատմական արդ հետազօտութիւնը, ևս կզբաղուեմ հայ ժողովրդի մէջ գործածող արժմեան նուազարանների նկարագրութեամբ։

Լարական նուազարաններից՝ ու ազը, որպէս հին հայկական զլիաւոր գործիք, անշուշտ Հայաստան է մաել Պարսկաստանից և հետզհետէ դարձել ամենազործածական նուազարանը։ Յեաու միայն թառը, որպէս սազի աւելի կատարելազործուածը և աւելի նուրը ժողովրդի աւելի բարձր Պատակարգի սիրած նուազարանն է զարձել։ Թողնելով սազը թափառական աշուղներին և ստորին դասակարգին։

Հնդկական մի զրոյց, որ անցել է պարսկիներին, թառի ծաղման մասին պատմում է հետևեալ լեզենդան։

Մի նշանաւոր երաժիշտ, ըրդիտեմ ինչ մի լանցանքի համար դաստալարտուած լինելով մի ռաջալից, լաջողովում է փախէլ և

*) Fetic. Hist. de la musique. 4. III. եր. 303 (լիշտակուած ակզդ. Հանդէսա ա. զիրք. եր. 20.

**) Յովհ. Կաթ. Պատմ. Հայոց։

ապաստանել Հնդկական անտառներում: Մի օր, երբ նա մտել էր խոր կողմերը; լանկարծ լսում է երաժշտական մի նոր գործիքի նուրբ, լուզիչ ձափն, որ կարծես իշխում էր վերնից և միօրինակ ու մեղմաձափն, երբեմն էլ ուժգին, հնչեցնում էր տարօրինակ երգ: Երաժիշտը երկար վնասակար լետով, մօտենում է մի բարձր ծառի և ապշաճ կանգ առնում նրա ստորոտին: Այնտեղ վերնում, վաղուց սատկած մի կապիկ, զյուխվալը կախ ընկած ծառից, կմախք էր զարձել. աղիքները չորացած՝ մի ժալրով կապած էին մնացել կղզուսկրին, իսկ միւսներով՝ իջել ողնասիւնի վրալով՝ մտել էին գանդի մէջ. և քամին սուրալով նրանց միջից, թրթուցնում էր ու տարօրինակ ձայներ առաջացնում: Երաժիշտը մտախոն կանգ առած, երկար զիտում է արդ ընական նուագարանը, լսում նրա, թէև միատեսակ, բայց դուրսկան ու մեշամարդիկ երգը և մտածում արհեստական կերպով շինել մի արգապիսի գործիք: Աւ հնարում է թառը: Աւ իրաւ, թառը բաւական նման է զյուխվալը զրած մի կմախքի՝ իր զանգով, ողնամիւնով և կղզոսկրով:

Զբոլցը սրանով չէ վերջանում: Նա արդ երաժշտին է վերագրում ոչ միայն թառի զիւտը, այլ և եղանակների կազմութիւնը, մանաւանդ մի զիւեցիկ եղանակի, որին կոչում են հագուստ պատառ առ առ առ առ առ զ^{*)}): Երբ երաժիշտը երկար մնալով մնատառներում, կատարելագործում է իւր նոր նուագարանը, հնարում է եղանակներ, մտածում է մոնել հարենիք, ներկայանալ ռաջալին և իւր նոր զիւտը ընծագելով նրան, իւր ներումն ունենալ: Ռաջան ամառանոցին վրաններումն է լինում, երբ երաժիշտը ներկայանում է նրան և խնդրում որ թոլ տալ նոր գործիքի վրալ նուագելու, նշխանը թէև կամենում էր նրան կախել տալ իսկոն, բայց զիջանում է լսել երաժշտութիւնը: Ան նստած են բոլորը, հաւաքում է մեծ ամբոխ և երաժիշտը թրթուցնում է նոր նուագարանի լարերը պինքն լուզիչ, այնքան տիսուր, որ բոլորը, սկսած ռաջալից մինչև ժեռին ծառան, արտավում են և տիսուրթիւնից կտրտում իրենց հագուստը: Բայց երաժիշտը փոխեց եղանակը և սկսեց մի գուարթ, կարտառ երաժշտութիւն: Ամէնքը վեր են թռնում ու մի կատաղի պար սկսում զժերի պէս:

Դատարիր, զատարիր, գոշում է ռաջան երաժշտին: Պու արժմ աւելի վտանգաւոր ես զարձել և զօրեղ՝ քան ես. Պու արդ անիծեալ գործիքովդ ընդունակ ես մարդկանց սիրան ու միտքը զերել, քեզ

^{*)} Պարսկերէն կոչվում է ռահի ջէ մէդարան. արդ եղանակի հնարողը սակալն, ըստ պարսկական պատմագիրների, համարվում է Նիդիսա երաժիշտը:



Ա. Վ. Մանուկյան
1838.

ԲԱՆՋԻ

Հայ. Ֆլուերիկա. Եվրոպա

Հարատակեցնել. զահին, խսկոյն կախել և լլ կախարդին և փշրել գործիքը...


Բայց երաժիշտը խսկոյն վորում է նույազը և այս անգամ հընչեցնում մի ախաղիսի եղանակ, որ բոլորը կարկամում են, զահինը տեղն ու տեղ քարանում և արդպէս երաժիշտը նույազելով թռնում է մի ուղտի վրալ և հնուանում դէպի անտառները, և ան նոտած է նա ալմէ ուղտի վրալ, թառը ձեռքին և նույազում է մի ախաղիսի եղանակ, որ ուղտը քամու արագութեամբ վազում է և ոչ մի ձեռք չէ կարողանում համեմել նրան...

Այս զրուցը ևս լոել եմ պարսիկներից, Ակսայէս են բացատրում նրանք թառի ծագումը:

Նույազարանը բազկացած է երեք մասից, Ամենից խոշորը՝ մարմինն է *) տանձածն մի փոս կորընթարթ արկղիկ, կից մի ուրիշ երկար ձուածն կորընթարթ տուփի, որոնց երկուսի երեսն էլ պատած է կովի փորամաշկի թափանցիկ թաղանթով. Մարմենի միջով, նօրիզոնապէս պարզած մի ձեռք միանում է երկար կոթին և անշարժ պահում նրան՝ մարմին կից, Կոթը (ողնասինը) ^{2/}, արշին երկարութիւն ունի և 3 մատնաշափ տափակ լայնութիւն վերի կողմից, տակի կողմը կորընթարթ (սունչե): Քանի դէպի վեր է զնում դէպի ականջները, կոթի լայնութիւնը պակասում է և ականջների մաս ^{2¹/₂} կամ 2 մատնաշափ լինում:

Ամրողջապէս նա զարգարուած է լինում փղոսկրեալ մօզալիկական դրուագներով (orgnament) և դրանց վրալով կապուած ձարնասանդուխի (ցառուե) մի շարք ափառ գաներ ըլու: Սրանք կազմուած են չորս միմեանց կից բարակ աղէթելից, Ընդհանրապէս 22 են, երբեմն առելի, տեղաւորուած են միմեանցից 1 սանտիմետր հեռաւորութեամբ, տեղ-տեղ էլ 2 կամ ^{2¹/₂} սանտ:

Դասաւորութիւնը ընդհանրապէս ալս ձեռք է.



Դնելով մատները սրանց միջոցներում լարերի վրալ, քիչ դէպի լաջորդ սփարդանո շեղած՝ ստացում են զանազան և լաջորդական խաղեր: Այս դասաւորութիւնը մշտական օրէնք չէ, կան թառեր,

*) Այս մարմինը շինուում է թթենու փալտից, լաւ թառը միշտ թթենու փալտից է շինուում.

որոնց պարզաբները ետ ու առաջ են տարվում. Սազը, աւելի շատ կիսաձախեր գործածելուն համար, որովհետեւ նրա վրայ ընդհանրապէս նուագում են տաճկական և արարտական եղանակներ—երբեմն մինչև 32 փարզա ունի և միմեանց խիստ մատ շարուած. Նուագողը ամբողջական ձախեր ունենալու համար ոչ թէ փարզաներին է նուրում, ալլ նրանց լարմարեցնում է իւր վարդուած մատներին, ետ ու առաջ մղելով փարզաները.

Փարզաների տուած լաջորդական ձախերի միմեանցից տարբերութիւնը թւերով կարելի է արտաքս արտապատել.

1, 1^{1/2}; 2, 2^{1/2}; 3, 3^{1/4}; 3^{1/2}; 4, 4^{1/2}; 5, 5^{1/4}; 5^{1/2}; 6, 7-7^{1/2}; 8, 8^{1/2}; 9, 10, 11, 12; և ալլն.

Լարերը, որոնք զլիսի կողմից պարզուելով գնում են կոթնելու մարմինի տանձածես մասի վրայ գրած երկաթեալ եռուտանունկամուրջին, 4 զորդ են. մէջտեղի երկու զորգը պղնձեալ, աջ և ձախ կողմից զորգերը պողպատէ. Կամուրջից անցնելով, նրանց ծալրերը ամբացըրած են տանձածես մասի եռուում մի եռանկիւնի տափակ տախտակի, որ կպցրած է մարմինին.

Կոթի վերի ծալրում 7 ականշներ մանում են կզզոսկրի նման մի նեղ արկղիկի մէջ, վերեր բաց. Ազդ բաց կողմից անցնելով՝ լարերը մտնում են ականշների մէջ և փաթաթւում նրանց վրալ. Չնալելով որ լարերը 8 են, սական ականշները 7 են, որովհետեւ ձախ կողմից զորգը ականշներին չհասած՝ կցած է և միացած՝ մըտնում է միայն մի ականշի մէջ. Ազդ միացած զորգը, որ իրը ձալնապահ է գործածուած, կոչւում է շէլթան. Դա մի նորաննար զորդ է, աւելի գործածական կովկասում և ելնելով ականշից միացած, ճիշդաւորուում է ներքենի փարզաներից մէկի ձախ կողին ցցած փոքրիկ սկկովիկի վրալից. և զորդ գնում է միանալու միւս լարերին.

Ականշները դասաւորուած են 3-ը աջ կողմից և 4-ը ձախ. 4-րդը ոչէլթանիտ ականշն է.

Բոլոր ալդ լարերը, առանց մատներ դնելու, արտալատում են միայն երեք տարբեր խազեր. ամեն երկու զորդ՝ ունի մի ձախ, իսկ աշէլթան-զորգը աջ կողմի զորգի ձախնը ունի. Ազատ լարերի խազերը միմեանցից տարբերուում են ոչ թէ ջութակի լարերի նըման 5 աստիճանով («Հ-Դ-Ե-Վ-Բ»), ալլ չորսով (ենթադրենք՝ «Վ-Ֆ-Հ-Ե»). Հիմնապէս, մինչև խակ աջ կողմի երկու զորգերն են, որ անփոփոխ երկու խազ ունին, որովհետեւ ձախ կողմի պղնձեալ զորգի խազը, նալելով նուազած եղանակին, միշտ փոփոխում են. Ազդ մասին քիչ բառոր. Սրանով հասկանալի է ուրեմն, որ ազատ լարերի վրայ, առանց երկրորդ կամ երրորդ պոռզից իւր իշնելու, մի ամբողջ օկտոս (ութնեակ) ունենալ անհնար է, ալլ շատ-շատ՝ 6 խազ. մա-

Նաևանդ որ իւրաքանչիւր լարի վրայ առաջին պողիցիալում միան երկու մատ կարելի է դնել և լեռու պէտք է անցնել լաջորդին՝ ձայնասանդուխ գորացնելու համար։ Զոթակի վրայ ալլ կերպ է։ ալշոտեղ, առաջին պողիցիալում (position) գործածում է չչ թէ երկու, ալլ երեք մատ, ալլ և նա ունի չորս լարեր և արգախով առաջին պողիցիան տալյա է 16 ձայն, արինքն երկու ամբողջ օկտոս։

Երրորդ և լաջորդ պողիցիաների համար, ջութակի իւրաքանչիւր թելի վրայ, ձայնասանդուխ գորացնելու համար, գործածում է 4 մատ, իսկ թառի վրայ պիտի գործածել 3։

Համեմատութիւնը և տարրերութիւնը աւելի պարզ կացուցանելու համար, գնենք այստեղ ջութակի և թառի առաջին պողիցիալի վրայ գործածուղ մատների շարքը։

Զ Ա Խ Թ Ա Կ.

սոլ	բէ	լա	մի
լա	մի	սի	ֆա
ֆա	դօ	սոլ	
1			
2			
3			

սի	մի	լա
դօ	ֆա	վ սի
բէ	սոլ	դօ
1		
2		
3		

Թառի վրայ, մոտև և ուրեմն, գրեթէ միշտ լեռագալ պողիցիաների դիմու և նուազել միշտ աջ կողմի երկու զորդի վրայ, պէտք եղած ժամանակ թոթուեցնելով միշտ զորդից հատհատ խաղեր։

Թառի քաղցրածայն և մելամազձիկ լինելու գաղտնիքը նրա լարուածքի մէջն է, կարում են ցած տօնով և միշտ մինօր խաղերով։ Կարուածքը զամերտօնի (զիապազօն, ձայնասու), վրայ չէ լինում, ալլ նուազողի քամանալովից է կախուած և նրա հետ երգողի ձայնից։ Նուազում են կնդնդոցով (թաղիանա), որը մի բարակ տաշած ձկուն ուկուիկ է, մոմով բռնատեղի ունենալով։ Կընդընդոցը գործածելու մէջ կա մեծ ճարափիկութիւն։ պիտի գիտենալ շարժել նրան սաստիկ արագ ապա, նուազի համեմատ մեզմ կամ ուժգին։ իսկ եթէ կամենում են ուեկ խազի երկար թռթռում տալ կամ զորացնել, զորացնում են ամբողջ թառը նրբութեամբ։ Առասարակ թառը բռնում են ալսպէս։ Տանձան մարմինը կողցնում են կուրծքին և մօտ ականջին, աջ ձեռքի երեք մատները կոթնե-

ցնում մարմնի թաղանդին, ձուանե մասի վրալ և նոյն ձեռքի բթամատով ու ցուցամատով գործածում կնճնդոցը:

Թառը զուտ ասիական գործիք է, հին արևելեան աղդերի կատարելադուած գործիք. Նրա նախնական ձեռքը եղել են Հընդկաստանում և մինչև իսկ Սգիպտոսում *). ալդ ձեռքը լայտնի էին հրէաներին և առորոց նոյնպէս *). Ազդ նուազարանը իր մի նօր լարուածքով, պարերգերն ու կալտառ եղանակներն իսկ մի տեսակ մնջամաղնուած կերպով է արտարաբում և լարմար է աւելի արևելեան՝ ոլորապտուր ու անվիրջ կիսամակներով, առանց ամանակին և առանց որոշ կանոնների ենթարկուած՝ եղանակների համար:

Կովկասում թառի նուագելը կատարելապէս կոպտացրել են. նուագողը անտանելի խառնաշփոթ ազմուկներ է հանում նրա վըրալ, եղանակին խառնելով ձախապահ լարերի կոպիտ ընկերակցութիւնը. Պարսկաստանում միայն հնարաւոր է լսել թառի իսկական լուզիչ նուագը իր բոլոր նրութեամբ, մեռնող խաղերով, թրթուն ձախներով. Պարսիկ լաւ նուագողը շատ հազիւ է դիմում ձախապահ թելերին և միայն հարկ եղած ժամանակ, ներդաշնակութիւն ունենալու համար է; որ դիմում է նրանց, իսկ ընդհանրապէս նա նուագում է մի քանի զուգի վրալ և աշխատում է արտարաբուել մաքուր, զուտ ձախներ. Աւ իսկապէս, քանի նուագողը վատ է, նա աւելի ազմկալից է նուագում, իր սիսալները ձախների խառնաշփութութեան մէջ թաղցնելու համար և քանի վարպետ է նուագողը, այնքան նա զուտ ձախներ է հանում. Կովկասի թառ նուագողներից ձախագրել եղանակները՝ անհնար է. նրանք ոչ միայն ալդ եղանակներն են աղաւագել, ապականելի; ալլ և նրանց արտարաբուութիւններն են կոշտացրել, անտանելի մօնօտ ո՞ն շինել.

Այսանց, երաժշտութիւնից հասկացողներին մի գաղափար տալու համար, հալերի մէջ, թառի վրալ նուագուող ամենաբարտնի եղանակների մասին, կը լիշտակեմ նրանցից զիսաւորները և նըրանց ձախասաննդուխը (ըստու)։

Ազդ եղանակները զրեթէ բոլորը պարսկական են, բացի բառի քիւր գիւր գը, որը, ինչպէս իսուու ես կապացուցանեմ, հալկական է:

Եղանակները, որոնք մելօդիներ են, կոչում են մուզամէ թշներ. իւրաքանչիւրը իր ետերից ունի մի լորդորակ կոտոր, որ լինում է կամ պարերդ և կամ մի երգ. թէ մուզամէ թշները և թէ իրենց լորդորակները լայտնի են ամեն աեղի հալերին և սիրելի

*) Տես Feti. Hist. de la musique.

**) Տես U. Գրոց բառարան, Վ. ի ն թառը իր պատկերով.

Նրանց նրանք ազգային են դարձել և ուր որ թառ կա, աբ եղանակները հնացմ են, որպէս թառին բառով նուազներ.

Ամենից բարդ և քաղցրահնչյան հիմնական եղանակներն են
Չարգեահանը և Սէպեահը՝ ևս իմ լոգուածի վերջուամ կը բացա-
տիւմ թէ ինչո՞ւ են շատ եղանակներ արդպէս կոչուամ, որովհետեւ
չարգեահանը նշանակում է և ամանակ (տեսրօն) սէպեահ Յ և
զոգեահ Զ և ալլը. Պիտի տեսնենք որ սկզբում արդ եղանակները
կազմուած են որոշ երաժշտական օրէնքներով և ամանակով, որոշ
պերսուագներով և պիտի տեսնենք, որ շատ հին երաժիշտներ, արդ
եղանակները նուազելիս կամ երգելիս չափուած են խօսում և ամա-
նակների բաժանում նրանց, որպէս եւրոպական մշակուած եղա-
նակները ունին:

Սս լիշտառակեցի հակերին ժամօթ եղանակները, Պարսիկաստանում, թատի խակազան երկրում, աղջակիսի եղանակները անթիւ են. Տարեգրութիւնների մէջ լիշտում է օրինակ Բաբուռդ անունով մի երածիչտ՝ Խոսրովը-Փէրզիդ թագավորի ժամանակակիցից, որ Եփրազի Զիհրում զիւղից էր և Հնարեց Յօնանակներ. Ագդ եղանակների խումբը կոչուում է Սիլահնը և ունի շատ բանաստեղծական անուններ. օրինակ Արաւիշը-Խորշիզ, Սէրգուզը-Կայուզ, Աքրուզը-Կայուզ:

Հայերին լալտնի 14 միլօդիների համար թառի երեք զոլոց լարերը լարում են և եղանակները ձախասանդուխ տնին ալս կարգով:

Աս ենթադրում եմ՝ որ Յ զորդ լարերը հիմնակի լարուած Մ-նեն ու ու կատարեն քառա սկսած ձախ կողմէից գույքից ^{**}).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԳԱՄ ԵՎ ԱՆՎԱՐԱՐԻ ԱՆԴԱՆԵՐԻ ԽԱՂՔԵՐ

$$f_{\mu\nu} = f_{\mu\nu}^{(1)} + f_{\mu\nu}^{(2)} + f_{\mu\nu}^{(3)} + f_{\mu\nu}^{(4)} + f_{\mu\nu}^{(5)} + f_{\mu\nu}^{(6)} + f_{\mu\nu}^{(7)} + f_{\mu\nu}^{(8)}$$

^{*)} Բոլոր 30 եղանակների անունները ունիմ. Նրանցից ո՞չ մէկը չէ կրում վերը լիշտած, հայերին լաւտնի եղանակների անունները, որոնք, ըստ երեսութիւնների, նոր եղանակներ են, նոր անուններում.

^{**)} Բոլոր եղանակների մէջ այլ կողմի երկու զուգի ձախները (լարուածքը) մնում է անփոփոխ, իսկ ձախ կողմի պղնձեալ զուգը փոփոխութեան է ենթարկւում բայց եղանակների:

